շատ պարելուց - շարշարելուց մեռնում են, ըստ որում բռնութեամբ են պար ածում հիւանդին։ Այս Պարսկական դեղ է։

Փառք Աստուծոյ, բացի տանու բժիշկներից այս լուսաւորեալ դարուս մէջ բժշկական դիտութիւնն այնքան յառաջ է գընացել և բժիշկները այնքան են շատացել, մինչեւ ամենայն քաղաք և գաւառ իրեն յատուկ բժիշկներն ունին, և շնորհիւ յիշեալ բժշկաց՝ սոնն հիւանդ կարողանում է ցաւին փարատումն ստանալ, ի հարկէ Աստուծոյ առ Ինքն կանչածներն հետզհետէ պէտք է գնան առ Աստուած, ըստ որում մահկանացու են։

Բժիշկներին պատուել է հրամայում Սողոմոն իմաստունը, և պէտք է. որովհետեւ նոցա ներկայութիւնն անդամ հիւանդին թեթեւութիւն է պատճառում, ուր մնաց, նոցա տուած դեղերն ու խորհուրդներն։

Բժիշկները խորհուրդ են տալի, և ասում և կրկնում, որ իւրաքանչիւր մարդ իրեն անձին հոգւոյ և մարմնոյ բժիշկն է. մարդ ինքը պէտք է զգոյշ մնայ և յամենայն դէպս աշխատի, որ հիւանդութեան պատճառներից հեռու մնայ։

Զամախին ունի և տեղական տանու վիրաբոյժը, ոսկրաբոյժը, ատամնաբոյժը, եւ այլն։

Ոսկրաբոյժ վարպետների մէջ նշանաւոր և առաջին տեղն է բռնում (1891 թուին) օրհնեալ և գովեալ 60 ամեայ այրի տիկին Նազանի բաջին՝ բարեպաշտութեամբ զարդարեալ, որ մայրաբար ամենայն սիրով և խնամքով աշխատում է իրեն դիմող տասնաւոր, քսանաւոր ոսկրաբէկ և վիրաւոր անձանց առողջացնել. և Աստուծոյ շնորհիւն առողջացնում է. ինչպէս 1887 թուին՝ յուլիս և օգոստոսին՝ առողջացրեց իմ իսկ՝ ձախ թեւը, որ նոյն թուի յունիսին՝ Զամախին՝ իմ պաշտօնավայրը գնալուս՝ Ծաղկաձոր (Դարաչիչակ) գաւառի Ներքին Սիատայ գիւղին մօտ՝ ձիանքը կառքը փախցնելով՝ ձգեցին ինձ գետին, ուր և թեւս կոտրուեց, որը Դարաչիչակի, Դիլիջանի և Քարվանսարայի ոսկրաբոյժները չկարելով առողջացնել, ծանօթ մարդիկ խորհուրդ տուեցին շտապել, փութալ, հասնել Զամախի և դիմել Նազանի բաջուն. և յիրաւի, օրհնեալ կինը՝ տեսնելուն պէս՝